«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՃԹՆ-Ի ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԵՐԵՎԱՆ 2019

Հաստատվել է ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից 2019թ. սեպտեմբերի 5-ին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
1. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ 4
2. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ ... 5
3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6
4. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ 13

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը 2017 թվականի մարտի 9-ից անդամակցում է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (այսուհետև՝ ԱՃԹՆ): ԱՃԹՆ-ն համաշխարհային ստանդարտ է, որի պահանջների իրականացման նպատակը նավթի, գազի, հանքարդյունաբերության ոլորտներում թափանցիկության և հաշվետվողականության բարելավումն է:

Կարևորելով պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրումը՝ որպես երկրի կայուն զարգացման առանցքային բաղադրիչ, և ելնելով ԱՃԹՆ-ի ստանդարտում ամրագրված սկզբունքներից՝ ԱՃԹՆ-ի շրջանակներում ԲՇԽ-ն այն սահմանել է որպես հանքարդյունաբերության ոլորտի համար ազգային առաջնահերթություն: Հաշվի առնելով, որ պատասխանատու հանքարդյունաբերություն հասկացությունը բավական լայն է և բազմաբովանդակ, ԲՇԽ-ը առավել արդյունավետ գործելու նպատակով ձեռնամուխ է եղել մշակելու «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը:

Հայաստանի Հանրապետությունում շարունակում է գերիշխող մնալ հետխորհրդային հանքարդյունաբերական մշակույթը: Այդ տեսանկյունից, ընդերքօգտագործման ոլորտում միջազգային լավագույն փորձի կիրառման ու սոցիալ-բնապահպանական պատասխանատվության բարձրացման տեսանկյունից գերկարևոր է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետև՝ ԱՃԹՆ) միջոցով Պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ հայեցակարգային փաստաթուղթ մշակելու օրակարգը, որի միջոցով հնարավոր է լինելու վերհանել և շտկել ընդերքօգտագործման ոլորտում առկա օրենսդրական, սոցիալ-բնապահպանական, կառավարչական և նույնիսկ տեխնոլոգիական խնդիրները:

1. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Հայեցակարգային փաստաթղթի նպատակն է ԱՃԹՆ ԲՇԽ-ի որոշմամբ ստեղծված պատասխանատու հանքարդյունաբերության (այսուհետև՝ ՊՀ) աշխատանքային խմբի կողմից հանքարդյունաբերության ոլորտին առնչվող հիմնախնդիրների վերլուծության և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա տալ պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը և շրջանակը, որտեղ կարտացոլվեն նաև ՊՀ ընդհանուր ուղղություններն ու առաջնահերթությունները: Սույն փաստաթուղթը պետք է ՊՀ աշխատանքային խմբի համար ամրագրի ԲՇԽ-ի տեսանկյունից հանքարդյուանբերության տեղն ու դերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում և նախատեսվում է կիրառել որպես ԲՇԽ-ի միասնական մոտեցում հետագայում առանձին անդամների կողմից հանքարդյունաբերության ոլորտի բարելավմանն ուղղված այնպիսի աշխատանքների իրականացման ժամանակ, ինչպիսիք են առաջնահերթ հարցերում իրավական ակտերի մշակումը, անհրաժեշտ գործողությունների ձեռնարկումը, ինչպես նաև մասնակցությունը ՀՀ կառավարության կողմից «Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության» մշակման և դրան նախորդող երկու ուսումնասիրությունների՝ «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» և «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով» աշխատանքներին:

2. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Պատասխանատու հանքարդյունաբերությունը ոլորտի բոլոր շահառուների՝ ընդերքօգտագործողների, պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, ազդակիր համայնքի բնակչության և քաղաքացիական հասարակության պատասխանատու գործելաոճի համակցությունն է: Ընդ որում պատասխանատվությունը բաշխվում է այդ դերակատարների միջև՝ իրենց համապատասխան իրավունքների, լիազորությունների ու պարտավորությունների արդյունավետ կազմակերպման համար պատշաճ մեխանիզմների կատարելագործմամբ:

Պատասխանատու հանքարդյունաբերությունը այնպիսի իրավական նորմերի, ինստիտուտների և գործելաոճի ամբողջություն է, որի միջոցով ապահովվում է ողջամիտ ընդերքօգտագործում՝ հիմնվելով շրջակա միջավայրի պահպանության, հնարավոր ռիսկերի գնահատման, մեղմացման, վնասի կանխարգելման և հետևանքների վերացման, տնտեսական օգուտ-վնաս հարաբերակցության գնահատման[1], ընդերքօգտագործողների, պետության և բնակչության համար օգուտի ստեղծման ու արդարացի բաշխման, լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառման, ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական կյանքում դրական ազդեցություն ունենալու, թափանցիկ և հաշվետու աշխատելու և անվտանգ ու առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ ապահովելու սկզբունքների վրա:

Պատասխանատու հանքարդյունաբերության մշտական ուղենիշը պետք է լինի կայուն զարգացման, տնտեսական արդյունավետության և սերունդների հանդեպ պատասխանատվության համակցումը:

[1]Տնտեսական օգուտ-վնաս հարաբերակցության գնահատումը կիրականացվի այն ստանդարտով, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կներդրվի որպես կիրառելի չափանիշ:

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պետության բարեվարքություն	1.1. Ընդերքօգտագործման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող օրենքներում առկա իրավական հակասությունների, օրենսդրական բացերի և կոռուպցիոն ռիսկերի վերացում, 1.2. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծերի և դրանց ՇՄԱԳ հաշվետվությունների պատրաստման, գնահատման և փորձաքննության ընթացքում առաջնորդվել աղտոտման կանխարգելման սկզբունքով, 1.3. Հանքարդյունահանման գործընթացքի նկատմամբ պատշաճ և համակարգված պետական վերահսկողության մեխանիզմների ապահովում, 1.4. Հանքարդյունաբերության ոլորտից եկամուտների կառավարման համակարգի վերանայում, 1.5. Պետական բյուջե եկող եկամուտներից համապատասխան համայնքներին մասնաբաժնի հատկացման հնարավորության դիտարկում, 1.6. Շրջական միջավայրի պահպանության դրամագլխի և ֆինանսական երաշխիքների մեխանիզմների վերանայում, 1.7. Պետական համակարգի կարողությունների զարգացում՝ ընդերքաբանական, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննությունների, տեսչական, պետական վերահսկողության հնարավորությունների՝ մասնագետների վերապատրաստմամբ, նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, լաբորատոր և տեխնիկական այլ սարքավորումների հագեցվածության ապահովմամբ,

	1.8. Տնտեսական օգուտ-վնաս հարաբերակցության գնահատում[2]:
2. Գործարար միջավայրի բարեվարքություն	2.1. Իրավական համապատասխանություն, իրավական նորմերի պահպանում, 2.2. Կայուն զարգացման պարբերական հաշվետվությունների հրապարակում GRI (Global Reporting Initiative) ստանդարտների[3] կամ այլ նմանատիպ ստանդարտների պահանջներին համապատասխան (խրախուսվում է), 2.3. Ազդակիր համայնքի և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն՝ - Ազդակիր համայնքների և շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցության մեխանիզմների կատարելագործում և ներգրավման պլանի մշակում, - Մասնակցային մոնիթորինգի իրականացում: 2.4. Մարդու (այդ թվում՝ աշխատանքային) իրավունքների պաշտպանություն և պատասխանատվություն՝ - Մարդկային ռեսուրսների համապատասխան քաղաքականության մշակում՝ մարդու իրավունքների, ռիսկերի և ազդեցության գնահատմամբ, որտեղ ամրագրված կլինի արժանապատիվ աշխատանքային պայմաններ ունենալու մարդու իրավունքը՝ հստակ արտացոլելով բարեկեցիկ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման պահանջը և դրանց իրականացման մեխանիզմերը, 2.5. Բողոքներ, բողոքարկման մեխանիզմներ և դրանցից օգտվելու հնարավորություն՝ - թափանցիկ, պարզ և հասանելի բողոքարկման մեխանիզմների ապահովում, հնարավորության սահմաններում՝ ըստ առանձին շահառուների, մասնավորապես ազդակիր համայնքների և աշխատակիցների համար,

[2]Տնտեսական օգուտ-վնաս հարաբերակցության գնահատումը կիրականացվի այն ստանդարտով, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կներդրվի որպես կիրառելի չափանիշ:
[3] https://www.globalreporting.org/standards

	2.6. Ընկերությունների կողմից պետությանը կատարած վճարումների թափանցիկություն[4], 2.7. Ընկերությունների կողմից օրենսդրությամբ նախատեսվող և իրականացվող միջոցառումների պարտադիրության և թափանցիկության և այլ միջոցառումների հաշվետվողականության ապահովում, 2.8. Ընդերքօգտագործման ոլորտի արդյունավետ կառավարում՝ - ընդերքից ռեսուրսների ռացիոնալ, համաչափ արդյունահանում, աղքատացման և կորուստների ցուցանիշների առավելագույն նվազեցում, - հանքաքարերի արդյունահանման, վերամշակման (կորզման) և ձուլման բարձր տեխնոլոգիաների կիրառում (ընդերքօգտագործողի կողմից ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիաների, չափորոշիչների և պահանջների ուսումնասիրություն և դրանք համադրելով տեղական չափորոշիչների և պահանջների հետ՝ առավել համապատասխանի կիրառում, հատկապես հանքաքարերից մետաղների կոմպլեքսային ու բարձր ցուցանիշներով կորզման նպատակով), - հանքային հումքի վերամշակման (հարստացման) և մետաղագործական մշակման արդյունքում տարատեսակ ապրանքային արտադրանքների (խտանյութ, համաձուլվածք և այլ հանքահումքային արտադրանքներ) ստացում, 2.9. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության ոլորտում ապահովագրության քաղաքականության մշակման և ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն,
3. Դրական ժառանգության ապահովման պլանավորում	3.1. Օրենսդրական կարգավորումների համապատասխան շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցություն, գնահատում և կառավարում՝ - շրջակա միջավայրի (բնությանը, հողին, ջրին, օդին, կենդանիներին, բուսականությանը և այլն) վրա և

[4] Ապահովվում է ԱՃԹՆ ստանդարտի պահանջներին համապատասխան և ՀՀ ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվության համակարգի միջոցով՝ https://reports.eiti.am/hy/

	սոցիալական ազդեցությունների գնահատման մեթոդաբանության մշակում, - բնապահպանական մոնիթորինգի և կանխարգելման, ազդեցությունների նվազեցման, չեզոքացման, փոխհատուցման գործողությունների իրականացում, - մասնակցային մոնիթորինգի իրականացում: 3.2. Աջակցություն ազդակիր համայնքներին և օգուտների նպատակային և արդյունավետ բաշխում՝ - ընկերությունների կողմից համայնքներում կատարվող սոցիալ-տնտեսական ներդրումների որոշման մեխանիզմների հստակեցում, - սոցիալական ծրագրերի միջոցով համայնքների զարգացմանը նպաստում, - տեղական տնտեսվարող սուբյեկտների միջոցով տեղական գնումների ծավալի ընդլայնման հնարավորությունների դիտարկում, - տեղական կարողությունների զարգացման միջոցով տեղական աշխատուժի ներգրավման ընդլայնում: 3.3. Վերաբնակեցում՝ - Նախագծեր իրականացնելիս ֆիզիկական կամ տնտեսական վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում վերաբնակեցումն սկսելուց առաջ ռիսկի և ազդեցության գնահատում, շահագրգիռ կողմերի ներգրավում, գործընթացի թափանցիկության ապահովում՝ պահպանելով արդարացի հավասարակշռություն հանրային և մասնավոր շահերի միջև, 3.4. Արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն և արձագանքում՝ - որպես պարտադիր պահանջ՝ ընկերության կողմից արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման խմբի ստեղծում,

	- արտակարգ իրավիճակների արձագանքման պլանի առկայություն: 3.5. Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնման և հանքի փակման պլանավորում և ֆինանսական ապահովում՝ - ընդերքօգտագործման արդյունքում բոլոր տեսակի խախտված տարածքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազայի ստեղծում, - ՀՀ տարածքում ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի ռեկուլտիվացման (հատկապես՝ կենսաբանական վերականգնման) առաջադեմ մեթոդների կիրառման հնարավորությունների ուսումնասիրություն, - Հանքի փակման ծրագրի վերանայման պարբերականության անհրաժեշտության ուսումնասիրություն և իրավական հիմքերի սահմանում (պայմանավորված հանքի շահագործման ժամկետներով), - Հանքերի փակման պատշաճ, պարտադիր կատարման ենթակա միջոցառումներից բաղկացած ծրագրի ներկայացում՝ համապատասխան և իրատեսական ֆինանսական երաշխիքներով՝ հաշվի առնելով ազգային տարադրամի հնարավոր արժեզրկումները և գնաճը, - օգտակար հանածոյի արդյունահանման բոլոր՝ նախապատրաստական, շահագործման և հանքի փակման փուլերում ընդերքօգտագործման հետևանքով խախտվող հողերի վերականգնման պատշաճ մեխանիզմների ապահովում՝ պահպանելով գործողություն, խախտված հողերի մակերես, խախտվածության և աղտոտվածության աստիճան, խախտված հողերի վերականգնմանը միտված ընթացիկ միջոցառումների իրականացում և խախտված հողերի վերջնական վերականգնում շղթայի պատճառահետևանքային կապը, - շրջակա միջավայրի պահպանության այնպիսի դրամագլխի առկայության ապահովում, որը

	հնարավորություն կտա գործունեության ցանկացած պահի փաստացի իրականացնել մինչ այդ պահը՝ խախտված հողերի վերականգնումը, առաջացած ընդերքօգտագործման թափոնների վերջնական տեղադրումը և նախատեսված բնապահպանական աշխատանքների իրականացումը, - կատարված աշխատանքների մեթոդների և արդյունքների հրապարակայնության ապահովում՝ ներառյալ ազդակիր համայնքների իրազեկում:
4. Սոցիալական պատասխանատվություն	4.1. Արժանապատիվ և արդար աշխատանքային պայմաններ՝ - բարենպաստ աշխատանքային պայմանների ապահովում, աշխատակցի կողմից բողոքարկման իրավունքի և դրա իրացման հնարավորության ապահովում, հիմնական անվտանգության պաշտպանիչ պարագաներով ապահովում, կարգապահական ընթացակարգերին տեղեկացվածության ապահովում և այլն: 4.2. Աշխատանքի հիգիենա և անվտանգություն՝ - անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովում, համապատասխան կառավարման համակարգի ներդնում (օրինակ՝ աշխատանքի հիգիենայի և անվտանգության OHSAS 18001:2007 ստանդարտի ներդնում)՝ առաջնորդվելով զրոյական վնաս (Zero Harm) սկզբունքով: 4.3. Ազդակիր համայնքի հանրության առողջություն և անվտանգություն՝ - ՇՄԱԳ և փորձաքննության գնահատման մեթոդաբանության մշակում և համապատասխան միջոցառումների նախագծում, - որպես վտանգավոր տեխնիկական արտադրական օբյեկտների՝ շահագործվող հանքավայրերի և լեռնային ձեռնարկությունների շուրջը սանիտարական գոտիների ստեղծում՝ գոտիների հստակ չափերի և իրավական ռեժիմի սահմանմամբ:

	4.4. Անվտանգության միջոցառումներ՝ - ընկերություններում աշխատակիցների անվտանգության ապահովմանն ու անվտանգության հետ կապված մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված համապատասխան կորպորատիվ քաղաքականության և ներքին կանոնակարգերի առկայություն, որտեղ սահմանված կլինեն հստակ մեխանիզմներ՝ գնահատելու և կառավարելու աշխատակիցների անվտանգությանը սպառնացող ռիսկերը, մարդու իրավունքների հանդեպ հնարավոր ոտնձգությունները, դիմագրավելու աշխատակիցների անվտանգության և մարդու իրավունքների մարտահրավերներին: 4.5. Մշակութային ժառանգության պահպանության և անխաթարության ապահովում՝ - Մշակութային ժառանգության օբյեկտների անխաթարության ապահովում և ըստ անհրաժեշտության փրկարարական պեղումների իրականացում:
5. Բնապահպանական պատասխանատվություն	5.1. Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների արդյունավետ կառավարում՝ - ընդերքօգտագործման թափոնների կառավարման լավագույն տեխնոլոգիաների կիրառություն և շրջակա միջավայրի վրա ընդերքօգտագործման թափոնների ազդեցության նվազեցում, - Հայաստանի տարածքում նախկինում իրականացված ընդերքօգտագործումից ժառանգված ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների հարակից տարածքների շրջակա միջավայրի մոնիթորինգի համակարգերի ներդրում, - օգտակար հանածոյի արդյունահանման բոլոր՝ նախապատրաստական, շահագործման և հանքի փակման փուլերում ընդերքօգտագործման

	թափոնների պատշաճ կառավարման մեխանիզմների ապահովում՝ պահպանելով գործողություն, թափոնի առաջացում, առաջացած թափոնի դասակարգում, ժամանակավոր պահում՝ ներառյալ ընթացիկ բնապահպանական միջոցառումները, վերջնական տեղադրում շղթայի պատճառահետևանքային կապը, - ընդերքօգտագործման թափոնների կառավարման խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում: 5.2. Ջրերի արդյունավետ կառավարում՝ - մակերևութային և ստորգետնյա ջրերի վրա բացասական ազդեցության կանխարգելում և մշտադիտարկումների իրականացում, - զրո արտահոսքով կամ փակ շրջանառում նախագծերի կիրառություն, - արդյունաբերական կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման խրախուսում, - ՇՄԱԳ փորձաքննության տեխնիկական առաջադրանքի մեջ թթվային դրենաժի և ըստ կիրառելիության՝ ցիանիդի ազդեցության, ռիսկերի գնահատման ներառում, - համապատասխան կառավարման պլանների մշակում: 5.3. Կենսաբազմազանության արդյունավետ քաղաքականության մշակում, կենսաբազմազանության ազդեցության գնահատման ստորակարգի մոտեցման ներդնում, էկոհամակարգային ծառայությունների ապահովում և հատուկ պահպանվող տարածքների ռազմավարության, պահպանության և օգտագործման արդյունավետ իրականացման ապահովում:

4. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Պետության բարեվարքություն

1.1. Ընդերքօգտագործման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող օրենքներում առկա իրավական հակասությունների, օրենսդրական բացերի և կոռուպցիոն ռիսկերի վերացում,

1.2. Պետական համակարգի կարողությունների զարգացում՝ ընդերքաբանական, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննությունների, տեսչական, պետական վերահսկողության հնարավորությունների՝ մասնագետների վերապատրաստմամբ, նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, լաբորատոր և տեխնիկական այլ սարքավորումների հագեցվածության ապահովմամբ:

2. Գործարար միջավայրի բարեվարքություն

2.1. Ընդերքօգտագործման ոլորտի արդյունավետ կառավարում՝

- ընդերքից ռեսուրսների ռացիոնալ, համաչափ արդյունահանում, աղքատացման և կորուստների ցուցանիշների առավելագույն նվազեցում,
- հանքաքարերի արդյունահանման, վերամշակման (կորզման) և ձուլման բարձր տեխնոլոգիաների կիրառում (ընդերքօգտագործողի կողմից ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիաների, չափորոշիչների և պահանջների ուսումնասիրություն և դրանք համադրելով տեղական չափորոշիչների և պահանջների հետ՝ առավել համապատասխանի կիրառում, հատկապես հանքաքարերից մետաղների կոմպլեքսային ու բարձր ցուցանիշներով կորզման նպատակով),
- հանքային հումքի վերամշակման (հարստացման) և մետաղագործական մշակման արդյունքում տարատեսակ ապրանքային արտադրանքների (խտանյութ, համաձուլվածք և այլ հանքահումքային արտադրանքներ) ստացում:

2.2. Մարդու (այդ թվում՝ աշխատանքային) իրավունքների պաշտպանություն և պատասխանատվություն՝

- Մարդկային ռեսուրսների համապատասխան քաղաքականության մշակում՝ մարդու իրավունքների, ռիսկերի և ազդեցության գնահատմամբ, որտեղ ամրագրված կլինի արժանապատիվ աշխատանքային պայմաններ ունենալու մարդու իրավունքը՝ հստակ արտացոլելով բարեկեցիկ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման պահանջը և դրանց իրականացման մեխանիզմները:

3. Դրական ժառանգության ապահովման պլանավորում

3.1. Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնման և հանքի փակման պլանավորում և ֆինանսական ապահովում՝

- ընդերքօգտագործման արդյունքում բոլոր տեսակի խախտված տարածքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազայի ստեղծում,
- ՀՀ տարածքում ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի ռեկուլտիվացման (հատկապես՝ կենսաբանական վերականգնման) առաջադեմ մեթոդների կիրառման հնարավորությունների ուսումնասիրություն,
- Հանքի փակման ծրագրի վերանայման պարբերականության անհրաժեշտության ուսումնասիրություն և իրավական հիմքերի սահմանում (պայմանավորված հանքի շահագործման ժամկետներով),
- Հանքերի փակման պատշաճ, պարտադիր կատարման ենթակա միջոցառումներից բաղկացած ծրագրի ներկայացում՝ համապատասխան և իրատեսական ֆինանսական երաշխիքներով՝ հաշվի առնելով ազգային տարադրամի հնարավոր արժեզրկումները և գնաճը,
- օգտակար հանածոյի արդյունահանման բոլոր՝ նախապատրաստական, շահագործման և հանքի փակման փուլերում ընդերքօգտագործման հետևանքով խախտվող հողերի վերականգնման պատշաճ մեխանիզմների ապահովում՝ պահպանելով գործողություն, խախտված հողերի մակերես, խախտվածության և աղտոտվածության աստիճան, խախտված հողերի վերականգնմանը միտված ընթացիկ միջոցառումների իրականացում և խախտված հողերի վերջնական վերականգնում շղթայի պատճառահետևանքային կապը,
- շրջակա միջավայրի պահպանության այնպիսի դրամագլխի առկայության ապահովում, որը հնարավորություն կտա գործունեության ցանկացած պահի փաստացի իրականացնել մինչ այդ պահը՝ խախտված հողերի վերականգնումը, առաջացած ընդերքօգտագործման թափոնների վերջնական տեղադրումը և նախատեսված բնապահպանական աշխատանքների իրականացումը,
- կատարված աշխատանքների մեթոդների և արդյունքների հրապարակայնության ապահովում՝ ներառյալ ազդակիր համայնքների իրազեկում:

3.2. Աջակցություն ազդակիր համայնքներին և օգուտների նպատակային և արդյունավետ բաշխում՝

- ընկերությունների կողմից համայնքներում կատարվող սոցիալ-տնտեսական ներդրումների որոշման մեխանիզմների հստակեցում,
- սոցիալական ծրագրերի միջոցով համայնքների զարգացմանը նպաստում,
- տեղական տնտեսվարող սուբյեկտների միջոցով տեղական գնումների ծավալի ընդլայնման հնարավորությունների դիտարկում,
- տեղական կարողությունների զարգացման միջոցով տեղական աշխատուժի ներգրավման ընդլայնում:

4. Սոցիալական պատասխանատվություն

4.1. Աշխատանքի պատշաճ պայմանների ապահովում՝

- արժանապատիվ և արդար աշխատանքային պայմանների ապահովում, աշխատակցի կողմից բողոքարկման իրավունքի և դրա իրացման հնարավորության ապահովում, հիմնական անվտանգության պաշտպանիչ պարագաներով ապահովում, կարգապահական ընթացակարգերին տեղեկացվածության ապահովում և այլն,
- անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովում, համապատասխան կառավարման համակարգի ներդնում (օրինակ՝ աշխատանքի հիգիենայի և անվտանգության OHSAS 18001:2007 ստանդարտի ներդնում)՝ առաջնորդվելով զրոյական վնաս (Zero Harm) սկզբունքով,
- ընկերություններում աշխատակիցների անվտանգության ապահովմանն ու անվտանգության հետ կապված մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված համապատասխան կորպորատիվ քաղաքականության և ներքին կանոնակարգերի առկայություն, որտեղ սահմանված կլինեն հստակ մեխանիզմներ՝ գնահատելու և կառավարելու աշխատակիցների անվտանգությանը սպառնացող ռիսկերը, մարդու իրավունքների հանդեպ հնարավոր ոտնձգությունները, դիմագրավելու աշխատակիցների անվտանգության և մարդու իրավունքների մարտահրավերներին:

4.2. Ազդակիր համայնքի հանրության առողջության և անվտանգության ապահովում՝

- ՇՄԱԳ և փորձաքննության գնահատման մեթոդաբանության մշակում և համապատասխան միջոցառումների նախագծում,
- որպես վտանգավոր տեխնիկական արտադրական օբյեկտների՝ շահագործվող հանքավայրերի և լեռնային ձեռնարկությունների շուրջը սանիտարական գոտիների ստեղծում՝ գոտիների հստակ չափերի և իրավական ռեժիմի սահմանմամբ:

5. Բնապահպանական պատասխանատվություն

5.1. Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների արդյունավետ կառավարում՝

- ընդերքօգտագործման թափոնների կառավարման լավագույն տեխնոլոգիաների կիրառություն և շրջակա միջավայրի վրա ընդերքօգտագործման թափոնների ազդեցության նվազեցում,

- Հայաստանի տարածքում նախկինում իրականացված ընդերքօգտագործումից ժառանգված ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների հարակից տարածքների շրջակա միջավայրի մոնիթորինգի համակարգերի ներդրում,
- օգտակար հանածոյի արդյունահանման բոլոր՝ նախապատրաստական, շահագործման և հանքի փակման փուլերում ընդերքօգտագործման թափոնների պատշաճ կառավարման մեխանիզմների ապահովում՝ պահպանելով գործողություն, թափոնի առաջացում, առաջացած թափոնի դասակարգում, ժամանակավոր պահում՝ ներառյալ ընթացիկ բնապահպանական միջոցառումները, վերջնական տեղադրում շղթայի պատճառահետևանքային կապը,
- ընդերքօգտագործման թափոնների կառավարման խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:

5.2. Ջրերի արդյունավետ կառավարում՝

- մակերևութային և ստորգետնյա ջրերի վրա բացասական ազդեցության կանխարգելում և մշտադիտարկումների իրականացում,
- զրո արտահոսքով կամ փակ շրջանառում նախագծերի կիրառություն,
- արդյունաբերական կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման խրախուսում,
- ՇՄԱԳ փորձաքննության տեխնիկական առաջադրանքի մեջ թթվային դրենաժի և ըստ կիրառելիության՝ ցիանիդի ազդեցության, ռիսկերի գնահատման ներառում,
- համապատասխան կառավարման պլանների մշակում: